

ԿԱՐՄՐՈՒԿ ԽՈՉՈՒԿ ԵՒ ՀԱՐՍԱՆԻԹ

ՊԱՏՎԱՍՏՆԵՐ

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ

1 Ինչու՞ պատվաստվել

Կարմրուկը, Խոզուկը ու Հարսանիթը (Գերմանական Կարմրուկ) լուրջ հիվանդություններ են:

Կարմրուկ

- Կարմրուկի վիրուսը պատճառում է ցան, հազ, վազոզ քիթ, աչքի գոգոռում, եւ ջերմություն:
- Այն կարող է առաջնորդել ականջի վարակման, թոքատապի, նուրբալի (ցնցումներ եւ սեւեռունություն), ուղեղի խանգարման եւ մահվան:

Խոզուկ

- Խոզուկի վիրուսը պատճառում է ջերմություն, գլխացավ եւ գեղձերի ուռեցք:
- Այն կարող է առաջնորդել խլության, մենենգիտի (ուղեղային եւ ողնաշարային թաղանթի վարակում), ամորձային եւ ձվարանային սաստիկ ցավերի ու հազվադեպ՝ մահվան:

Հարսանիթ (Գերմանական Կարմրուկ)

- Հարսանիթի վիրուսը պատճառում է ցան, թեթեւ ջերմություն եւ հոդացավեր (մեծամասամբ կանանց մոտ):
- Եթե կինը հղության շրջանին վարակվի հարսանիթով, նա կարող է ունենալ վիժում կամ երեխան կարող է ծնվել լուրջ արատներով:

Դուք կամ ձեր երեխան կարող եք վարակվել եթե լինեք այս հիվանդությունները ունեցող անձի շուրջ: Նրանք անհատից անհատ տարածվում են օդի միջոցով:

Կարմրուկի, Խոզուկի եւ Հարսանիթի (MMR) պատվաստները կարող են մարդկանց պաշտպանել այս հիվանդություններից:

Երեխաների մեծամասնությունը որոնք ընդունում են MMR պատվաստները, այս հիվանդություններով չեն վարակվի: Շատ ավելի երեխաներ կարող են վարակվել եթե պատվաստումը դադարեցնենք:

2 Ո՞վ պետք է ընդունի MMR պատվաստ եւ ե՞րբ

Երեխաները պետք է ընդունեն MMR պատվաստի 2 դեղաչափ.

- ✓ Առաջինը՝ 12-15 ամսական հասակում
- ✓ Եւ երկրորդը՝ 4-6 տարեկան հասակում:

MMR VIS - Armenian (1/15/03)

Մրանք հանձնարարված տարիքներն են: Սակայն, երեխաները կարող են ընդունել երկրորդ դեղաչափը որեւէ տարիքում, այն պայմանով որ պատվաստումը լինի առաջին դեղաչափից գոնե 28 օր հետո:

Որոշ չափահասներ նույնպես պետք է ընդունեն MMR պատվաստ. Ընհանրապես, 18 տարեկան եւ ավելի մեծ որեւէ անհատ, որ ծնվել է 1956-ից հետո, պետք է ընդունի MMR պատվաստի գոնե մեկ դեղաչափ. այլապես՝ պետք է կարողանա ապացուցել թե կամ արդեն պատվաստը ընդունել է՝ եւ կամ վարակվել է այս հիվանդություններով:

Հավելյալ տեղեկությունների համար հարցրեք ձեր բժիշկին կամ բուժքրոջ:

MMR-ի պատվաստը կարելի է ընդունել տարբեր պատվաստների հետ միաժամանակ:

3 Որոշ մարդիկ չպետք է ընդունեն MMR պատվաստ կամ պետք է սպասեն

- MMR պատվաստ չպետք է ստանան այն անհատները որոնք երբեւէ ունեցել են կյանքի սպառնացող գերզգայնական հակազդեցություն **ժելատինի, նեոմիցին անտիբիոտիկի կամ MMR պատվաստի նախապես ընդունված դեղաչափի դեմ:**
- Անհատներ որոնք թեթեւակի կամ լուրջ հիվանդ են պատվաստի պայմանավորված օրում, ընդհանրապես պետք է սպասեն մինչեւ ապաքինում, նախքան MMR պատվաստ ընդունելը:
- Հղի կանայք MMR պատվաստ ընդունելու համար պետք է սպասեն մինչեւ ծննդաբերություն: MMR պատվաստ ընդունելուց հետո, մինչեւ 4 շաբաթ, կանայք չպետք է հղիանան:
- Որոշ մարդիկ պետք է ստուգեն իրենց բժիշկի հետ թե արդյո՞ք պետք է ստանան MMR պատվաստ: Այդ մարդկանց շարքին են պատկանում նրանք որոնք.
 - ունեն HIV/AIDS կամ տարբեր հիվանդություն որը ազդում է վարակամերժ դրության վրա
 - 2 շաբաթից ավելի բուժվում է այնպիսի դեղերով որոնք ազդում են վարակամերժ դրության, ինչպիսին են ստերոյդները
 - Ունի որեւէ տեսակի քաղցկեղ
 - Ենթարկվում է քաղցկեղի բուժման Թ-ճառագայթներով կամ դեղամիջոցներով

- Երբեք ունեցել է արյան գնդիկների նվազում (արյան խանգառում)

- Մարդիկ որոնք վերջերս ունեցել են արյան ընդհեղում կամ տրվել են տարբեր արյան արտադրյալներ, պետք է հարցնեն իրենց բժիշկին թե երբ կարող են ընդունել MMR պատվաստ

Հավելյալ տեղեկությունների համար հարցրեք ձեր բժիշկին կամ բուժքրոջ:

4 Որո՞նք են MMR պատվաստի վտանգները

Որեւէ պատվաստ, ինչպես որեւէ այլ դեղամիջոց, ունակ է պատճառելու լուրջ բարդություններ, ինչպիսիք են լուրջ գերզգայնական հակազդեցությունները: MMR պատվաստի լուրջ վնաս կամ մահ պատճառելու վտանգը չափազանց փոքր է:

MMR պատվաստ ընդունելը շատ ավելի ապահով է քան թե այս երեք հիվանդություններից որեւէ մեկով վարակվելը:

MMR պատվաստ ստացող գրեթե բոլոր մարդիկ բարդություններ երբեք չեն ունենում:

Թեթեւ բարդություններ

- ջերմություն (6 անհատներից մինչեւ՝ 1 անհատ)
 - թեթեւ ցան (շուրջ՝ 20 անհատներից 1 անհատ)
 - այտերի եւ վզի գեղձերի ուռեցք (հազվադեպ)
- Եթե այս բարդությունները պատահեն ապա դրանք կպատահեն սրկումից հետո 7-ից 12 օրվա ընթացքում: Երկրորդ դեղաչափից հետո դրանք ավելի քիչ կպատահեն:

Չափավոր բարդություններ

- Նոպաներ (ցնցում կամ սեւեռումություն) ջերմությունից առաջացած (շուրջ 3,000 դեղաչափերից 1 դեղաչափի դեպքում)
- Հոդերի ժամանակավոր ցավեր եւ կարծրություն մեծամասամբ պատահի կամ չափահաս կանանց մոտ (4 անհատներից մինչեւ 1-ի մոտ)
- Արյան գնդիկների ժամանակավոր նվազեցում որը կարող է պատճառել արյունահոսություն (շուրջ 30,000 դեղաչափերից 1 դեղաչափի դեպքում)

Սուր բարդություններ (շատ հազվադեպ)

- Լուրջ գերզգայնական հակազդեցություն (1,000,000 դեղաչափում 1-ից ավելի քիչ)
- Երեխան MMR պատվաստ ընդունելուց հետո բազմաթիվ այլ սուր բարդություններ կարող են առաջանալ: Բայց սա այնքան հազվադեպ է որ մասնագետներ վստահ չեն թե դրանք պատվաստից են առաջացել թե ոչ: Դրանք են.
 - Խլություն
 - Երկարատեւ նոպաներ, մահաբուն, կամ գիտակցության նվազեցում
 - Ուղեղի մշտական վնասվածք

5 Ի՞նչ անել չափավոր կամ սուր հակազդեցության դեպքում

Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնեմ

Որեւէ արտասովոր վիճակ, ինչպիսիք են լուրջ գերզգայնական հակազդեցություն, բարձր ջերմություն

կամ վարքի փոփոխություններ: Լուրջ գերզգայնական հակազդեցության նշաններ են՝ շնչելու դժվարություն, խուպոտ ձայն կամ հծծում, մաշկի այրոց, գունատություն, թուլություն, սրտի արագ տրոփում, կամ գլխապտույտ պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչեւ մի քանի ժամ: Եթե բարձր ջերմություն կամ ցնցում են պատահում, ապա նրանք տեղի կունենան սրակվելուց 1 կամ 2 շաբաթ հետո:

Ի՞նչ պետք է անեմ

- Հեռաձայնեք բժիշկին, կամ հիվանդին շտապփոյթ կերպով տարեք բժիշկի մոտ:
- Հայտնեցեք ձեր բժիշկին եղելության մասին, թվականն ու ժամանակը եւ թե ե՞րբ է տրվել պատվաստը:
- Հարցրեք ձեր բժիշկին, բուժքրոջ, կամ առողջապահական բաժնին լրացնելու Vaccine Adverse Event Reporting System (VAERS) ձեռնարկ: Կամ դուք ինքներդ հեռաձայնեք 1-800-822-7967 համարով կամ այցելեք <http://www.vaers.org> website-ի հասցեն:

6 Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագիր

Հազվադեպ պարագայում երբ դուք կամ ձեր երեխան ցուցաբերում եք լուրջ հակազդեցություն պատվաստի նկատմամբ, օգնության կարգով ստեղծված է պետական ծրագիր խնամքի ծախսերը հոգալու նրանց՝ որոնք վնասված են:

Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագրի մանրամասնությունների վերաբերյալ հեռաձայնեցեք 1-800-338-2382 կամ այցելեցեք ծրագրի website-ը հետեւյալ հասցեով <http://www.hrsa.gov/osp/vicp>

7 Ինչպե՞ս կարող եմ իմանալ ավելին

- Հարցրեք ձեր բժիշկին կամ բուժքրոջը: Նրանք ձեզ կտան պատվաստումների մասին տեղեկատվական գրքուկի ներդիր, կամ կառաջարկեն տեղեկության այլ աղբյուրներ:
- Հեռաձայնեցեք ձեր շրջանային կամ նահանգային բաժնի ախտազերծման ծրագրին:
- Կապվեցեք Centers for Disease Control and Prevention (CDC)-ի հետ.
 - Call 1-800-232-4636 (1-800-CDC-INFO)
 - Այցելեցեք National Immunization Program-ի website-ը հետեւյալ հասցեով. <http://www.cdc.gov/nip>



U.S. DEPARTMENT OF HEALTH & HUMAN SERVICES
Centers for Disease Control and Prevention
National Immunization Program

Vaccine Information Statement
MMR IMM - 375ML - Armenian (1/15/03) 42 U.S.C. § 300aa-26

Translated by Transcend Translations, Davis, CA